ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2016թ. **N ------- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Շինարարների փողոցի հ.35 շենքի քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային մուտքի բնակիչներին վերաբնակեցնելու նպատակով (համաձայն հավելվածի) անհատույց օտարել (նվիրել) բնակարաններ՝ Շինարարների փողոցի հ.15 և Սիսակյան փողոցի հ.22 հասցեներում գտնվող նոր կառուցված շենքերից։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով նախատեսվում է Շինարարների փողոցի հ.15 և Սիսակյան փողոցի հ.22 հասցեներում գտնվող նոր կառուցված բնակելի շենքեր վերաբնակեցնել Երևան քաղաքի Շինարարների փողոցի հ.35 շենքի 4-րդ կարգի վթարային մուտքի բնակիչներին՝ համաձայն հավելվածի։

ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին» 682 որոշմամբ կարգավորվում են քանդման ենթակա վթարային շենքերի բնակիչների վերաբնակեցման հետ կապված իրավահարաբերությունները։

Որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ կից հավելվածում նշված քաղաքացիները՝ վտանգելով իրենց կյանքն ու առողջությանը, դեռևս բնակվում են Շինարարների փողոցի հ.35 հասցեում գտնվող 4-րդ կարգի վթարային մուքում։ Այդ շենքի մուտքը գտնվում է փլուզման սպառնալիքի տակ և անկանխատեսելի հետևանքներից խուսափելու նպատակով, քաղաքացիների հետ կատարված բանակցությունների արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել հավելվածում նշված ընտանիքներին վերաբնակեցնել և տրամադրել նոր բնակարաններ։

Ստորև ներկայացվում է յուրաքանչյուր ընտանիքի անհատական տվյալների նկարագիրը։

Քաղաքացիներ Լուսյա Հարությունյանը և Նաիրա Մնացականյանը /ընդհանուր 2 անձ/ 2000 թվականից հաշվառված և փաստացի բնակվում են Շինարարների փողոցի 4-րդ կարգի վթարային հ.35 շենքի հ.2 բնակարանում /հիմք՝ 21.12.2015թ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին հ.504599 և 508246 տեղեկանքներ, 22.12.2015թ և 24.12.2015թ. «Աջափնյակ-5» համատիրության հ.464 և հ.472 տեղեկանքներ/։

Նշված ընտանիքը համաձայնություն է տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.15 շենքում, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները։

Քաղաքացիներ Անահիտ Սումբատյանը և Վարդան Սմբատյանը /ընդհանուր 2 անձ/ 1975 թվականից հաշվառված և փաստացի բնակվում են Շինարարների փողոցի 4-րդ կարգի վթարային հ.35 շենքի հ.6 բնակարանում /հիմք՝ 21.12.2015թ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին հ.508237 տեղեկանք, 24.12.2015թ. «Աջափնյակ-5» համատիրության հ.469 տեղեկանք/։

Նշված քաղաքացիները համաձայնություն են տվել վերաբնակեցվել նորակառույց Սիսակյան փողոցի հ.22 շենքում, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները։

Քաղաքացի Սուսաննա Ղազարյանը 1990 թվականից հաշվառված և փաստացի բնակվում է Շինարարների փողոցի 4-րդ կարգի վթարային հ.35 շենքի հ.8 բնակարանում /հիմք՝ 21.12.2015թ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին հ.508598 տեղեկանք, 21.12.2015թ. «Աջափնյակ-5» համատիրության հ.459 տեղեկանք/։

Քաղաքացին համաձայնություն է տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.15 շենքում, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները։

Քաղաքացիներ Ժենյա Գազարյանը, Իրինա Գազարյանը և Ժաննա Գազարյանը /ընդհանուր 3 անձ/ 1992 թվականից հաշվառված և փաստացի բնակվում են Շինարարների փողոցի 4-րդ կարգի վթարային հ.35 շենքի հ.9 բնակարանում /հիմք՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության մաշտոցի անձնագրային բաժանմունքի 01.03.2016թ հ.22/10-691 գրություն, 11.03.2016թ. «Աջափնյակ-5» համատիրության հ.415 տեղեկանք/։

Քաղաքացիները վերաբնակեցվում են նորակառույց Սիսակյան փողոցի հ.22 շենքում, սակայն տվյալ դեպքում բացակայում է Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները։

Քաղաքացի Մարգարիտա Եղիազարյանը 1995 թվականից փաստացի բնակվում է Շինարարների փողոցի 4-րդ կարգի վթարային հ.35 շենքի հ.10 բնակարանում /հիմք՝ 21.12.2015թ. «Աջափնյակ-5» համատիրության հ.458 տեղեկանք, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության մաշտոցի անձնագրային բաժանմունքի 23.12.2015թ հ.22/10-2440 գրություն/:

Քաղաքացին համաձայնություն է տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.15 շենքում, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները*:*

Քաղաքացի Սարգիս Հակոբյանը 2000 թվականից հաշվառված և փաստացի բնակվում է Շինարարների փողոցի 4-րդ կարգի վթարային հ.35 շենքի հ.11 բնակարանում /հիմք՝ 21.12.2015թ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին հ.508245 տեղեկանք, 21.12.2015թ. «Աջափնյակ-5» համատիրության հ.460 տեղեկանք/:

Քաղաքացին համաձայնություն է տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.15 շենքում, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները*:*

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննարկվող դեպքերով բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի, անհրաժեշտություն է առաջացել գործող կարգի համաձայն, Շինարարների փողոցի հ.35 շենքի 4-րդ կարգի վթարային մուտքի բնակիչներին վերաբնակեցնելու համար ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
,,_____,,_____ 2016թ. N_____-Ա որոշում

Ց Ա Ն Կ

ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ Հ.35 ՇԵՆՔԻՑ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՎՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

Հ/Հ	Անուն Ազգանուն	Վթարային շենքի բնակարանի հասցեն	Կառուցվածքը /սենյակների թիվը/	Տրամադրվող բնակարանի հասցեն	Կառուցվածքը /սենյակների թիվը/	Ծանոթություն
1	Լուսյա Հարությունյան Նաիրա Մնացականյան	Շինարարների փողոցի հ.35 շենքի հ.2	1	Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.10	1	
2	Անահիտ Սումբատյան Վարդան Սմբատյան	Շինարարների փողոցի հ.35 շենքի հ.6	3	Սիսակյան փողոցի հ.22 շենքի հ.91	3	
3	Սասաննա Ղազարյան	Շինարարների փողոցի հ.35 շենքի հ.8	1	Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.18	1	
4	Ժենյա Գազարյան Իրինա Գազարյան Ժաննա Գազարյան	Շինարարների փողոցի հ.35 շենքի հ.9	3	Սիսակյան փողոցի հ.22 շենքի հ.3	3	
5	Մարգարիտա Եղիազարյան	Շինարարների փողոցի հ.35 շենքի հ.10	2	Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.27	2	
6	Սարգիս Հակոբյան	Շինարարների փողոցի հ.35 շենքի հ.11	1	Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.29	1	